ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ը

ՔԱՂԱՔԱՑԻ ԱԼԲԵՐՏ ԻՍԿԱՆԴԱՐՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀՀ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 263-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 2-ՐԴ ՄԱՍԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երեւան 21 դեկտեմբերի 2010թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի (զեկուցող), Ֆ. Թոխյանի, Մ. Թոփուզյանի, Ա. Խաչատրյանի, Վ. Հովհաննիսյանի, Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի, Վ. Պողոսյանի,

մասնակցությամբ՝

դիմող Ա. Իսկանդարյանի,

գործով որպես պատասխանող կողմ ներգրավված՝ ՀՀ Ազգային ժողովի պաշտոնական ներկայացուցիչ՝ ՀՀ ԱԺ նախագահի խորհրդական Դ. Մելքոնյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 25, 38 եւ 69-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Քաղաքացի Ալբերտ Իսկանդարյանի դիմումի հիման վրա՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 263-րդ հոդվածի 2-րդ մասի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթն Ա. Իսկանդարյանի՝ 15.06.2010թ. ՀՀ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, կողմերի գրավոր բացատրությունները, հետազոտելով ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց.**

1. ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել է 1998 թվականի հուլիսի 1-ին, ՀՀ Նախագահի կողմից ստորագրվել՝ 1998 թվականի սեպտեմբերի 1-ին եւ ուժի մեջ մտել 1999 թվականի հունվարի 12-ից:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի՝ վիճարկվող «Քրեական գործով վարույթը կարճելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշման բողոքարկումը» վերտառությամբ 263-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է.

«2. Դատախազը բողոքը ստանալու պահից 7 օրվա ընթացքում որոշում է կայացնում բողոքը մերժելու կամ բավարարելու մասին: Կայացված որոշման պատճենն անհապաղ ուղարկվում է բողոքը ներկայացնող անձին: Գործով վարույթը կարճելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու հետ կապված բողոքը մերժելու մասին դատախազի որոշումը դրա պատճենն ստանալու պահից 7 օրվա ընթացքում կարող է բողոքարկվել դատարան»:

Օրենսգրքի 263-րդ հոդվածը փոփոխվել է «ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» 21.02.2007թ. ՀՕ-93-Ն օրենքով: Նշված օրենքով օրենսգրքի 263-րդ հոդվածի 2-րդ մասը շարադրվել է գործող խմբագրությամբ:

2. Գործի դատավարական նախապատմությունը հանգում է նրան, որ դիմող Ալբերտ Իսկանդարյանը 24.01.2008թ. հանցագործության մասին հաղորդում է ներկայացրել ՀՀ ոստիկանության Էրեբունու բաժին: 04.04.2008թ. նախապատրաստված նյութերով որոշում է կայացվել քրեական գործի հարուցումը մերժելու մասին: Հիշյալ որոշումը դիմողի կողմից բողոքարկվել է Երեւան քաղաքի Էրեբունի եւ Նուբարաշեն համայնքների ընդհանուր իրավասության դատարան, որի՝ 20.06.2008թ. որոշմամբ վերացվել է դատավարական ակտը:

04.09.2008թ. Էրեբունու քննչական բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 325-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով հարուցվել է քրեական գործ եւ կատարվել նախաքննություն: ՀՀ ոստիկանության Նոր Նորքի քննչական բաժնի ավագ քննիչի՝ 19.06.2009թ. որոշմամբ քրեական գործի վարույթը կարճվել է: Հիշյալ որոշումը բողոքարկվել է վերադաս դատախազին, որի՝ 06.07.2009թ. որոշմամբ բողոքը մերժվել է: Նույն որոշումը բողոքարկվել է Երեւան քաղաքի Ավան եւ Նոր Նորք համայնքների ընդհանուր իրավասության դատարան, որի՝ 08.09.2009թ. որոշմամբ Երեւանի Նոր

Նորք քննչական բաժնի ավագ քննիչի՝ «Քրեական գործով վարույթը կարճելու մասին» 19.06.2009թ. որոշումը վերացնելու եւ դատարան դիմելու ժամկետի բացթողումը հարգելի համարելու մասին բողոքը մերժվել է:

Երեւան քաղաքի Ավան եւ Նոր Նորք համայնքների ընդհանուր իրավասության դատարանի հիշյալ որոշումը բողոքարկվել է ՀՀ վերաքննիչ քրեական դատարան: Վերջինիս՝ 16.10.2009թ. որոշմամբ՝ դիմողի կողմից ներկայացված վերաքննիչ բողոքը մերժվել է, իսկ վիճարկվող դատական ակտը թողնվել օրինական ուժի մեջ: ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի հիշյալ որոշումը դիմողը բողոքարկել է ՀՀ վճռաբեկ դատարան, որի՝ 16.12.2009թ. «Վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին» որոշմամբ՝ ներկայացված վճռաբեկ բողոքը վերադարձվել է:

3. Դիմող կողմը գտնում է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 263-րդ հոդվածի 2-րդ մասը հակասում է ՀՀ Սահմանադրության 18 եւ 19-րդ հոդվածներին՝ այն պատճառաբանությամբ, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 263-րդ եւ 290-րդ հոդվածներով նույն բնույթի եւ նույն հատկանիշներով որոշումների բողոքարկման համար օրենսդրի կողմից սահմանված են երկու տարբեր ժամկետներ, որոնց մեջ չկողմնորոշվելու դեպքում անձը զրկվում է նյութական իրավունքի պաշտպանության հնարավորությունից:

Դիմողի գնահատմամբ՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 263-րդ հոդվածի 1-ին մասով քրեական գործով վարույթը կարճելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշումը բողոքարկելու համար սահմանվել է միայն վերադաս դատախազին 7 օրվա ընթացքում դիմելու իրավունք, իսկ այդ նորմի 2-րդ մասով՝ եւս 7 օր ժամանակ, սակայն այդ նորմում իմպերատիվ պահանջ է հենց դատախազի, այլ ոչ թե քննիչի որոշման բողոքարկումը: Չնայած նրան, որ 263-րդ հոդվածի 1-ին մասի՝ որոշումը վերադաս դատախազին բողոքարկելու, իսկ 2-րդ մասի՝ վերադաս դատախազի որոշումը դատարան բողոքարկելու դրույթներն իմպերատիվ չեն՝ դրանցում միանգամից դատարան դիմելու համար ստույգ ժամկետ չնշելը, ըստ դիմողի, հանգեցնում է նրան, որ դատական պրակտիկայում պետք է կարծիք ձեւավորվի առ այն, որ իրավունքների պաշտպանության ժամկետ է սահմանված 14 օրը՝ 7 օր վերադաս դատախազին դիմելու համար եւ 7 օր վերադաս դատախազի ստացված որոշումը բողոքարկելու համար: Նման անհստակությունը հանգեցրել է կոնկրետ իրավունքի խախտման:

4. Ըստ պատասխանող կողմի՝ վիճարկվող նորմը համապատասխանում է ՀՀ Սահմանադրությանը հետեւյալ պատճառաբանությամբ: ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի 2-րդ մասը քրեական դատավարության մինչդատական վարույթում հնարավոր բոլոր դատավարական որոշումներից ու գործողություններից առանձնացնելով մի քանիսը՝ հստակ սահմանում է, որ դրանք եւս դատական վերահսկողության առարկա են: Սահմանելով մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության օրենսդրական հիմքերը, ինչպես նաեւ դատական վերահսկողության առարկա որոշումների եւ գործողությունների շրջանակը, ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը, հաշվի առնելով որոշ ակտերի բողոքարկման հատուկ ժամկետների եւ ընթացակարգերի կարեւորությունը, առանձին նորմերով սահմանել է այդ որոշումների բողոքարկման հատուկ ընթացակարգ:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ եւ 263-րդ հոդվածները հարաբերակցվում են ինչպես մասը եւ ամբողջը, քանի որ վերջին իրավադրույթն անմիջապես կարգավորում է քրեական գործով վարույթը կարճելու եւ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշման բողոքարկման կարգը: Ուստի քրեական գործով վարույթը կարճելու եւ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշումը պետք է բողոքարկվի 263-րդ հոդվածով սահմանված կարգով:

Պատասխանողը գտնում է, որ վիճարկվող դրույթը բավարարում է իրավական որոշակիության պահանջը եւ երաշխավորում է անձի՝ ՀՀ Սահմանադրության 18 եւ 19-րդ հոդվածներով երաշխավորված դատական պաշտպանության իրավունքը:

5. Դիմումի ուսումնասիրությունը վկայում է, որ դիմողը հիմնականում բարձրացնում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի երկու նորմերի, այն է՝ օրենսգրքի 290-րդ հոդվածի 3-րդ մասի եւ վիճարկվող 263-րդ հոդվածի 2-րդ մասի ենթադրյալ կոլիզիայի խնդիր: Վերջինս դրսեւորվում է նրանում, որ, ի տարբերություն 290-րդ հոդվածի 3-րդ մասով՝ բողոքը ներկայացնելուց հետո մեկ ամսվա ժամկետը լրանալու օրվանից դատարան դիմելու համար սահմանված մեկամսյա ժամկետի, վիճարկվող նորմը պահանջում է քրեական գործով վարույթը կարճելու որոշման դեմ բողոքի քննության արդյունքում դատախազի ընդունած որոշումը դատարան բողոքարկել 7-օրյա ժամկետում: Ընդ որում, եթե օրենսգրքի 290-րդ հոդվածի 1-ին եւ 2-րդ մասերում շեշտվում են «...սույն օրենսգրքով նախատեսված որոշումները» եւ «սույն օրենսգրքով

նախատեսված դեպքերում» հանգամանքները, ապա 3-րդ մասը որեւէ՝ փվյալ իրավակարգավորումից տարբերվող, այլ կանոնակարգման հնարավորության մասին հղում չի բովանդակում:

Հաշվի առնելով նշված հանգամանքը՝ սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում խնդիրը դիտարկել օրենսգրքի 290-րդ հոդվածի 2-րդ եւ 3-րդ մասերի եւ 263-րդ հոդվածի 2-րդ մասի բովանդակության (առարկայի) եւ իրավակարգավորման հսպակության լույսի ներքո:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 278-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է. «Դատարանը, սույն օրենսգրքով սահմանված **դեպքերում եւ կարգով**, քննում է հետաքննության մարմինների, քննիչի, դատախազի եւ օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների որոշումների եւ գործողությունների օրինականության վերաբերյալ բողոքները»: Նշված դրույթում՝ «...սույն օրենսգրքով սահմանված **դեպքերում եւ կարգով**» ձեւակերպումից բխում է, որ մինչդատական վարույթում քրեական հետապնդում իրականացնող մարմինների ոչ բոլոր որոշումները կարող են անմիջականորեն բողոքարկվել դատարան: Դատական կարգով բողոքարկման ենթակա որոշումների ցանկը, ի թիվս այլնի, սահմանված է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի 2-րդ մասում, որի համաձայն՝ դատարան կարող են բողոքարկվել հանցագործությունների վերաբերյալ հաղորդումներն ընդունելուց, քրեական գործ հարուցելուց հետաքննության մարմնի, քննիչի եւ դատախազի հրաժարվելը, ինչպես նաեւ քրեական գործը կասեցնելու, կարճելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշումները՝ **դարձյալ օրենսգրքով նախատեսված դեպքերում:** Օրենսգրքի 290-րդ հոդվածի 2-րդ մասում «**օրենսգրքով նախատեսված դեպքերում**» ձեւակերպումը նշանակում է, որ օրենսգրքով կարող է սահմանվել 290-րդ հոդվածի 2-րդ մասում նշված որոշումների բողոքարկման միջնորդավորված կարգ եւ ներկայացվել մինչեւ դատական պաշտպանության դիմելը՝ օրենսգրքով նախատեսված արտադատական պաշտպանության միջոցն սպառելու պահանջ: Ի դեպ, ինչ վերաբերում է մինչդատական վարույթում վերոհիշյալ սուբյեկտների կողմից ընդունված որոշումների բողոքարկման արտադատական կարգի սահմանադրականությանը, ապա այդ խնդրին սահմանադրական դատարանն անդրադարձել է իր՝ 2009թ. դեկտեմբերի 7-ի ՍԴՈ-844 որոշմամբ:

Իր հերթին, օրենսգրքի 263-րդ հոդվածը սահմանել է 290-րդ հոդվածի 2-րդ մասում մատնանշված՝ քրեական գործով վարույթը կարճելու կամ քրեական

հետապնդումը դադարեցնելու մասին որոշման բողոքարկման երկաստիճան համակարգ, որի համաձայն՝ մինչդատական վարույթում նշված որոշումը պետք է բողոքարկվի նախ վերադաս դատախազին, ապա վարույթն իրականացնող մարմնի գտնվելու վայրի առաջին ատյանի դատարան:

Ինչ վերաբերում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290 եւ 263-րդ հոդվածների հարաբերակցության խնդրին՝ **ժամկետային կարգի սահմանման առնչությամբ,** ապա սահմանադրական դատարանն արձանագրում է, որ եթե օրենսգիրքը նախատեսում է 290-րդ հոդվածի 3-րդ մասում սահմանված ընդհանուր կարգից շեղում այլ իրավադրույթներում, ապա իրավական անորոշությունից խուսափելու համար անհրաժեշտ էր թեկուզ հավելել՝ «...եթե սույն օրենսգրքով այլ բան նախատեսված չէ» բառակապակցությունը: Առկա խմբագրությունը եւ նշված երկու հոդվածներում ժամկետային կարգավորումները հստակ տարբերակված չեն, որը, ինչպես վկայում են քննության առարկա գործի նյութերը, մարդու իրավունքների խախտման իրական վտանգ է բովանդակում: Այդ անհամապատասխանությունը թերեւս առաջացել է այն պատճառով, որ 21.02.2007թ. ՀՕ-93-Ն օրենքով օրենսգրքի 263-րդ հոդվածի 2-րդ մասը նոր խմբագրությամբ շարադրելու արդյունքում վերջինս համակարգային ամբողջականության մեջ չի դիտարկվել 290-րդ հոդվածի 3-րդ մասի իրավակարգավորման հետ: Մինչեւ փոփոխությունն այդ դրույթը պարզապես սահմանել է, որ «Գործով վարույթը կարճելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու հետ կապված բողոքը բավարարելուց դատախազի հրաժարվելը կարող է բողոքարկվել դատարան»: Բնականաբար, նման ձեւակերպման պարագայում հիշյալ անհամապատասխանությունն առկա չի եղել:

6. Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում արձանագրել նաեւ, որ տվյալ հիմնախնդրին ՀՀ վճռաբեկ դատարանն անդրադարձել է ոչ միայն դիմողի վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին 16.12.2009թ. որոշման շրջանակներում, որով իրավաչափ է նկատել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 263-րդ հոդվածի 2-րդ մասի կիրառումը վերաքննիչ դատարանի կողմից: 2010 թվականի ԵԱԴԴ/0014/11/09 գործով ըստ էության կայացրած իր որոշման մեջ՝ քննարկելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի եւ 185-րդ հոդվածի 3-րդ մասի (վերաբերում է քրեական գործ հարուցելը մերժելու մասին որոշումը բողոքարկելուն, որով 21.02.2007թ. ՀՕ-93-Ն օրենքով օրենսգրքի 263-րդ հոդվածի 2-րդ

մասին բնորոշ ժամկետային կարգավորում է նախատեսվել) հարաբերակցության հարցը, ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ «...դրանցում առկա է ուղղակի հակասություն», ուստի «...քննության առարկա հարաբերությունների նկատմամբ պետք է գործի ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի կանոնը՝ որպես ավելի վաղ ուժի մեջ մտած իրավական ակտ»:

Միաժամանակ, 15.12.2010թ. ՀՀ սահմանադրական դատարան ներկայացրած իր տեղեկանքում ՀՀ դատական դեպարտամենտն իր հերթին փաստել է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 263-րդ հոդվածի 2-րդ եւ 290-րդ հոդվածի 3-րդ մասերի միջեւ առկա է հակասություն:

Պատասխանող կողմը նույնպես չի առարկում, որ հիշյալ երկու դրույթների ժամկետային իրավակարգավորման միջեւ անհամապատասխանությունն առկա է, սակայն պնդում է, որ դրանք մասի եւ ամբողջի հարաբերակցության շրջանակներում դիտարկելու պարագայում սահմանադրականության խնդիր չի առաջանում:

ՀՀ սահմանադրական դատարանը գտնում է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 263-րդ հոդվածի 2-րդ մասի եւ 290-րդ հոդվածի 3-րդ մասի դրույթները՝ որպես մասնակիի եւ ընդհանուրի հարաբերակցում, հստակ չեն փոխհամաձայնեցված, ինչպես նաեւ դատական պրակտիկայում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի 3-րդ մասի, 185-րդ հոդվածի 3-րդ մասի եւ 263-րդ հոդվածի 2-րդ մասի՝ համակարգային ամբողջականության մեջ մեկնաբանման այնպիսի նախադեպ չի ձեւավորվել, որպեսզի անձի համար գործնականում ապահովվի ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածով երաշխավորված՝ դատարանի մատչելիության եւ իրավունքների դատական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունքի լիարժեք իրականացումը:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետով, 102-րդ հոդվածով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 եւ 69-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 263-րդ հոդվածի 2-րդ մասում ամրագրված՝ «Գործով վարույթը կարճելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու հետ կապված բողոքը մերժելու մասին դատախազի որոշումը դրա

պատճենն ստանալու պահից 7 օրվա ընթացքում կարող է բողոքարկվել դատարան» դրույթը՝ նույն օրենսգրքի 290-րդ հոդվածի 3-րդ մասի իրավակարգավորման հետ անհամապատասխանության պայմաններում եւ սույն գործով դատական պրակտիկայում դրան տրված բովանդակության շրջանակներում ճանաչել Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 18-րդ հոդվածին հակասող եւ անվավեր:

2. Հաշվի առնելով, որ տվյալ խնդրի իրավաչափ լուծումը եւ հակասական իրավակարգավորման հաղթահարումը նաեւ օրենսդրական փոփոխությունների անհրաժեշտություն է ենթադրում, ինչպես նաեւ նկատի ունենալով, որ սույն որոշման եզրափակիչ մասի 1-ին կետում ՀՀ Սահմանադրությանը հակասող ճանաչված նորմի անմիջական անվավերությունն անխուսափելիորեն կառաջացնի անբարենպաստ հետեւանքներ մարդու իրավունքների պաշտպանության առումով՝ ՀՀ Սահմանադրության 102-րդ հոդվածի 3-րդ մասի եւ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68-րդ հոդվածի 15-րդ մասի հիմքերով սույն որոշման մեջ ՀՀ Սահմանադրությանը հակասող »ն անվավեր ճանաչված իրավանորմի ուժը կորցնելու վերջնական ժամկետ սահմանել 2011թ. հունիսի 30-ը:

3. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ **Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

21 դեկտեմբերի 2010 թվականի
ՍԴՈ-930